



Երկուշաբթի, 13 Ապրիլ, 2020

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 16, 30

ԱՂՕԹՔ ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՈՀՈՒԹԵԱՆ

Պահպանէ զիս, ով Աստուած, քեզի ապաւինած եմ:

Տիրոջ ըսի. ,Դուն ես Տէրս, քեզմէ զատ ուրախութիւն չունիմ:

Միշտ Տէրը իմ դիմացս ներկայ ունիմ.

Երբ անիկա իմ կողքիս է՝ ոչինչ կրնայ զիս սասանեցնել:

Ահա թէ ինչու սիրտս ուրախ է, հոգիս ցնծութեան մէջ է,

եւ մարմինս վստահութեամբ կը հանգչի,

որովհետեւ զիստեմ թէ զիս մեռելներու աշխարհին մէջ պիտի չձգես,

եւ պիտի չթողուս որ քու հաւատարիմ ծառայիդ մարմինը փտութիւն տեսնէ:

Կեանքի ճամբան ցոյց կու տաս ինձի,

ներկայութիւնդ զիս ցնծութեամբ կը լեցնէ,

եւ քու մօտդ ըլլալը յաւէտ երջանկութիւն է:

Կը փառաբանեմ քեզ, Տէր, որովհետեւ զիս ազատեցիր,

եւ թոյլ չտուիր որ թշնամիներս ինդան իմ վրաս:

Տէր, իմ Աստուածս, քեզ օգնութեան կանչեցի եւ դուն զիս բժշկեցիր:

Զիս մահուրնէն ետ կեանքի բերիր, երբ մահուան փոսը կ'իջնէի:

Ողբս պարի վերածեցիր, սուգի հագուստս հանեցիր,

եւ ինձի ուրախութեան զգեստ հագցուցիր,

որպէսզի ես քեզի ներքոյ երգեմ անդադար:

Տէր, իմ Աստուածս, յաւէտ գոհութիւն քեզի:

ՆԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցեղոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն ես նեղեղոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահպան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄ ԵՐԵՄԻԱՅԻ

33 ԳԼՈՒԽ

ՅՈՅՄԻ ՈՒՐԻՇ ԽՈՍՏՈՒՄ ՄԸ (33:1-26)

Այո, թեպէպ Երեմիան բանարն է, բայց Աստուած Իր պարգամը երկրորդ անգամ ըլլալով կու տայ մարգարէին, անգամ մը եւս յիշեցնելով, թէ ինչ կը պարտասպէ Իր ժողովուրդին համար: Հեղափոխական արայայարութիւն մը կը գրնենք այսպէս: Տէրը կ'ըսէ. «**Ինծի կանչէ ու քեզի պարասխան փամ եւ քեզի մեծ ու խորհրդաւոր բաներ պարմեմ, որոնք դուն չես գիտեր**» (3 հմր): Կը նշանակէ եթէ Տէրը փնտռենք, Տիրոջ դիմենք, Ան պարտասպ է ոչ միայն պարասխան փալու, այլ փակաին ինչ խորհուրդներ յայտնելու: Առաւել եւս Իր սէրը եւ գութը հանդէպ Իր ժողովուրդին: «Մեծ ու խորհրդաւոր բաներ»ը ոչ թէ միայն Իսրայէլին վերադառնալն է, այլ անոնց բարգաւաճումը, առաւել եւս բաներ որոնք պիտի կարարուին Մեսիայի գալուստին, այսինքն՝ Քրիստոսի ժամանակներուն:

Շարունակելով պարգամը. «**Այս փունները մեռած մարդոց դիակներով պիտի լեցուին, որոնք իմ բարկութիւնովս ու սրտմտութիւնովս պիտի զարնեմ, որովհետեւ այս քաղաքէն իմ երեսս ծածկեցի՝ իրենց բոլոր չարութեանը համար: Ահա անոր առողջութիւն ու բժշկութիւն պիտի բերեմ ու զանոնք պիտի բժշկեմ եւ խաղաղութեան ու բարօրութեան առաքութիւնը անոնց պիտի յայտնեմ: Յուդան ու Իսրայէլը գերութենէն պիտի դարձնեմ ու զանոնք առաջուան պէս պիտի հասարարեմ: Ինծի դէմ գործած բոլոր անօրէնութենէն զանոնք պիտի սրբեմ ու ինծի դէմ ըրած բոլոր անօրէնութիւններն ու յանցանքերը պիտի ներեմ**» (5-8 հմր): Կրկնութեան գնով, նոյն պարգամն է, ուր անգամ մը եւս կը շեշտուի Աստուծոյ բարութիւնը, ողորմութիւնը, ու մանաւանդ՝ սէրը հանդէպ մարդ արարածին, թէ որքանով Տէրը պարտասպ է ներելու, սրբելու, վերահասարարելու մեղքի մէջ ինկած մարդը: Եզեկիէլին պիտի ըսէ Տէրը. «Ես մեղաւորին մահը չեմ ուզեր, այլ անոր դարձը եւ փրկութիւնը» (Եզ 18:21-23): Այո, Տէրը ողորմած է, մեղաւորին մահը չ'ուզեր, բայց նաեւ, մեղաւորին դարձը: Միակողմանի չէ, սակայն: Աստուած Ինք պարտասպ է, բայց նաեւ մեղաւորը իր անօրէնութեան ճամբէն պէտք է դառնայ ու Աստուծոյ պարտաւորանները պահէ, որպէսզի ապրի:

Այս կարարուածը Աստուծոյ փառքին համար է, Անոր ուրախութեան անուն ու պարծանք է երկրի բոլոր ազգերուն մէջ, որոնք պիտի լսեն Աստուծոյ ըրած բարութիւնները եւ պիտի վախճան ու դողան այդ բարութեան եւ յաջողութեան համար (9 հմր):

«**Տէրը բարի է, Անոր ողորմութիւնը յաւիտեան է**» (11 հմր), այս է ու այսպէս պէտք է ճանչնալ ու դաւանիլ Տէրը: «**Այն օրը ու այն ժամանակը, որ Աստուած Իր ըրած ուխտը պիտի կարարէ, Դաւիթէն արդարութեան շառաւիղ մը պիտի բուսցնեմ եւ անհկա երկրի վրայ իրաւունք եւ արդարութիւն պիտի ընէ**» (14-15 հմր):

Հեղափոխականօրէն Երեմիա մարգարէին փրուած պարգամները իր ժամանակին կամ անմիջական գալիք ժամանակներուն համար չեն, այլ՝ Քրիստոսի կարարած, ու Անոր թագաւորութեան (17-18 հմր): Մանաւանդ երբ նկարի առնենք, որ այլեւս փաճար չկայ գոհ եւ ընծայ մարտցելու Աստուծոյ, ուրեմն մարգարէութիւնը կը վերաբերի գալիք ժամանակներուն Քրիստոսով հասարարուած թագաւորութեան ու քահանայութեան:

Անգամ մը եւս Տէրը Իր ողորմութիւնն է որ ցոյց կու տայ Իր ժողովուրդին նկարմամբ. «**Զանոնք գերութենէն պիտի դարձնեմ ու անոնց պիտի ողորմիմ**» (26 հմր):